# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 հոկտեմբերի 2025 թվականի N 457-Ա**

**«ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԱԳԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Գ. Հովսեփյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ.**

1. «Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Գագիկ Հովսեփյանին 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 17-ը ներառյալ տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր:

2. Վարչատնտեսական մասի համակարգողի արձակուրդում գտնվելու ընթացքում նրա պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Մարիամ Վարդանյանին:

Recoverable Signature

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 1
ք. Կապան